

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«_____» _____ 2020 թ. N _____-Ա

«ԷՓԻՋԻ ԼԷՐԱ ԷՅԷՄ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱԼԱՔՅԱՆ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻՑ ՑԱԾՐ ԱՐԺԵՔՈՎ ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասը՝ Կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել, որ «Էփիջի Լէրա Էյէմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասից 15000 մ² մակերեսով հողամասը՝ բացառապես ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի /այսուհետև՝ Համալիր/ կառուցման և վերջինիս գործունեության ապահովման համար, տրամադրվում է Սիմոնյան կրթական հիմնադրամին օգտագործման նպատակով, ամսական 18300 ՀՀ դրամով՝ մինչև Համալիրի կառուցման ավարտը:

2. Սահմանել, որ Սիմոնյան կրթական հիմնադրամին, «Էփիջի Լէրա Էյէմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասից 15000մ² մակերեսով հողամասը տրամադրվում է նվիրաբերությամբ՝ բացառապես ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցման և վերջինիս գործունեության ապահովման նպատակով՝ սույն որոշման 1-ին կետում սահմանված գործարքից հետո, բայց ոչ ուշ քան «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական միության միջև 2018թ. նոյեմբերի 29-ին և դեկտեմբերի 14-ին ստորագրված «Հայաստանում ԵՄ-ն նորարարության համար» նախաձեռնություն. Կրթության բարելավում՝ հատկապես գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտներում» (Հատուկ պայմաններ) ֆինանսավորման համաձայնագրի ժամկետի ավարտը:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված գործարքների կնքման և կատարման նպատակով 15000 մ² մակերեսով հողամասը կարող է առանձնացվել «Էփիջի Լէրա Էյէմ»

սահմանափակ պատասխանատվության ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող 5.3896 հեկտար հողամասի ցանկացած մասից՝ որպես մեկ միավոր գույք:

4. Սահմանել, որ Սիմոնյան կրթական հիմնադրամին «Էփիջի Լէբս Էյէմ» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից «ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի» ստեղծման և վերջինիս գործունեության ապահովման նպատակով 15000 մ² մակերեսով հողամասի տրամադրման գործարքի համար պետության կողմից սույն որոշման ընդունման արդյունքում ավելացված արժեքի հարկի գծով առաջացող պարտավորությունների կրճատված մասը չի համարվում որպես «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական միության միջև 2018թ. նոյեմբերի 29-ին և դեկտեմբերի 14-ին ստորագրված «Հայաստանում ԵՄ-ն նորարարության համար» նախաձեռնություն. Կրթության բարելավում՝ հատկապես գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտներում» (Հատուկ պայմաններ) ֆինանսավորման համաձայնագրով և դրան հաջորդած «ԵՄ-Սիմոնյան կրթական համալիր» պայմանագրով Սիմոնյան կրթական համալիրի կողմից ստանձնած ներդրումային համաֆինանսավորման մաս:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷՓԻՋԻ ԼԷՔՍ ԷՅԷՄ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱԼԱՔՅԱՆ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻՑ ՑԱԾԻ ԱՐԺԵՔՈՎ ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Անհրաժեշտությունը

«Էփիջի Լէքս Էյէմ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Հալաքյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասն իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ օգտագործման տրամադրելու և այն անհատույց օտարելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական միության միջև 2018թ. նոյեմբերի 29-ին և դեկտեմբերի 14-ին ստորագրված «Հայաստանում ԵՄ-ն նորարարության համար» նախաձեռնություն. Կրթության բարելավում՝ հատկապես գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտներում» (Հատուկ պայմաններ) ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում որպես համաֆինանսավորող կողմ և նաև տարածքի հատկացման հանձնառող Սիմոնյան կրթական հիմնադրամին, բարերարի՝ «Էփիջի Լէքս Էյէմ» ՍՊԸ-ի կողմից, 15000մ² մակերեսով հողատարածքը՝ բացառապես ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցապատման իրավունքով և վերջինիս գործունեության ապահովման նպատակով օգտագործման տրամադրելու և այնուհետև նվիրելու դեպքում առաջացող հարկային պարտավորությունները վերջինիս կողմից կրելու ի զորու չլինելու հանգամանքից:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական միության միջև 2018թ. նոյեմբերի 29-ին և դեկտեմբերի 14-ին ստորագրված «Հայաստանում ԵՄ-ն նորարարության համար» նախաձեռնություն. Կրթության բարելավում՝ հատկապես գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտներում» (Հատուկ պայմաններ) ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում որպես համաֆինանսավորող կողմ և նաև տարածքի հատկացման հանձնառող Սիմոնյան կրթական հիմնադրամին, բարերարի՝ «Էփիջի Լէքս Էյէմ» ՍՊԸ-ի կողմից, 15000մ² մակերեսով հողատարածքը՝ բացառապես ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցապատման իրավունքով և վերջինիս գործունեության ապահովման նպատակով օգտագործման տրամադրելու և այնուհետև

նվիրելու դեպքում Սիմոնյան կրթական հիմնադրամը հանձն է առել ծրագրի իրականացման նպատակով հատկացնել 15000 մ² մակերեսով հողատարածք: Բանակցության արդյունքում բարերարն իրեն պատկանող «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ի միջոցով պատրաստակամություն է հայտնել Սիմոնյան կրթական հիմնադրամին հանձնել անհրաժեշտ հողատարածքը՝ պայմանով, որ.

«Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ն հողատարածքն ի սկզբանե բացառապես ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցապատման իրավունքով և վերջինիս գործունեության ապահովման նպատակով տրամադրում է օգտագործման Սիմոնյան կրթական հիմնադրամին, որից հետո առանց հետ կանչելու հնարավորությամբ, հողատարածքը՝ բացառապես ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի գործունեության ապահովման նպատակով նվիրատվությամբ տրամադրում է Սիմոնյան կրթական հիմնադրամին և սահմանված կարգով ազատվում է նշված գործարքներից առաջացող հարկային պարտավորություններից:

ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիրը երիտասարդների համար առաջադեմ STEM (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա) էկոհամակարգի ստեղծման ներդրումային ծրագիր է, որի համար Եվրոպական միությունը հատկացրել է 12.5 միլիոն եվրո: Ծրագիրը հետապնդում է երկու հիմնական նպատակ: Այն է՝ տրամադրել ժամանակակից կրթություն Հայաստանի STEM ուսանողներին և երիտասարդ մասնագետներին՝ պատրաստելով նրանց աշխատանքի շուկային և դարձնելով ավելի մրցունակ և ստեղծել հարթակ արդեն իսկ գոյություն ունեցող նախաձեռնությունների համար (աքսելորատորներ, ինկուբատորներ, համալսարան և արդյունաբերություն)՝ ապահովելով սիներգիա բոլոր շահառուների միջև:

Կարգավորման նպատակը

Սույն նախագծի ընդունմամբ պետության կողմից կաջակցվի ՀՀ-ում ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի ստեղծմանը:

Ծրագրի իրականացումն ենթադրում է տարածքի ֆիզիկական ընդլայնում: Ծրագրի շրջանակներում ԹՈՒՄՈ կենտրոնին կից նախատեսվում է կառուցվել մոտ 15000 մ² մակերես ունեցող շինություն: Շինությունը ներառելու է կրթական, հետազոտական և առևտրային ենթակառուցվածքներ, մասնավորապես՝ STEM հետազոտությունների լաբորատորիաներ, որոնք Թումո ծրագրի տրամաբանական շարունակություն են և հնարավորություն են տալու ԲՈՒՀ-երում

սովորող ուսանողներին և երիտասարդ մասնագետներին՝ 18 տարին լրանալուն պես, ձեռք բերել STEM-ին առնչվող կիրառական և առաջադեմ հմտություններ, ինչպես նաև Հայաստանում Ֆրանսիական համալսարանի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի նոր ֆակուլտետ, ստարտափների հանգույց, օֆիսների և կոնֆերանսների կենտրոն և կոմերցիոն տարածք՝ կենտրոնի երկարաժամկետ ֆինանսական կայունությունն ապահովելու համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասն իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ օգտագործման տրամադրելու և այն անհատույց օտարելու մասին Կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էականա վելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«ԷՓԻՋԻ ԼԷԲՍ ԷՅԷՄ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱԼԱԲՅԱՆ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ**

**ՀՈՂԱՄԱՍՆ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻՑ ՑԱԾԻ ԱՐԺԵՔՈՎ ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

Առարկության, առաջարկության հեղինակ, գրության ստաց մանամսաթիվ, գրությանհամար	Առարկության, առաջարկության բովանդակություն	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
1. ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե 07.11.2019թ. հ.ՍՊ//8529-2019	Առաջարկություններ և առարկություններ չկան		
2. Ֆինանսների նախարարություն 21.11.2019թ. հ. 01/2-3/18883-2019	<p>1. ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 9-րդ հոդվածի՝</p> <p>1) 1-ին մասի համաձայն՝ հարկը և վճարը համարվում են սահմանված միայն այն դեպքում, երբ սահմանված են հարկ վճարողների շրջանակը, հարկման օբյեկտը, հարկման բազան, հարկի դրույքաչափը, հարկի հաշվարկման կարգը, հարկի վճարման կարգը և ժամկետները,</p> <p>2) 2-րդ մասի համաձայն՝ հարկի և բնօգտագործման վճարի սահմանման համար անհրաժեշտ տարրերը սահմանվում են Օրենսգրքով:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը, և մասնավորապես այն, որ ՀՀ կառավարության որոշմամբ չի կարող սահմանվել հարկման բազա՝ առաջարկում ենք նախագծում և դրա վերնագրում կատարել համապատասխան փոփոխություններ:</p>	1. ընդունվել է	1. նախագծում և վերնագրում կատարվել է փոփոխություն

	<p>2. Նախագծի 1-ին կետով առաջարկվում է սահմանել, որ Սիմոնյան կրթական հիմնադրամին «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ի կողմից հողամասն իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ 3 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով <i>փոխանցելու</i> վերաբերյալ գործարքը Օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասի կիրառման նպատակով համարվում է իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ կնքված գործարք, և այդ գործարքի դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ստացման ենթակա հատուցման գումարը՝ առանց ԱԱՀ-ի:</p> <p>Վերոգրյալի կապակցությամբ, հայտնում ենք, որ Օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ է համարվում աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի): Նույն կետի կիրառության իմաստով՝ ծառայության մատուցում են համարվում, մասնավորապես, ոչ նյութական ակտիվի օտարումը և ոչ նյութական ակտիվի օգտագործման տրամադրումը:</p> <p>Ընդ որում, Օրենսգրքով ԱԱՀ-ով հարկման օբյեկտների թվում կառուցապատման իրավունքի կամ առհասարակ ցանկացած այլ ոչ նյութական ակտիվի <i>փոխանցումը</i> նախատեսված չէ: Այս առումով, հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք նախագծով սահմանել, որ «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ի կողմից կառուցապատման իրավունքը Սիմոնյան կրթական հիմնադրամին օտարվում է կամ տրամադրվում է օգտագործման:</p>	2.ընդունվել է	2.Նախագծի 1-ին կետը լրամշակվել է
3.Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 11.11.2019թ. հ.	<p>«Սիմոնյան կրթական հիմնադրամին ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների ավելացած արժեքի հարկով հարկման բազա սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը քննարկվել է Պետական գույքի կառավարման կոմիտեի հետ:</p>	1.Ընդունվել է	1.Նախագծի հիմնավորումը լրամշակվել է

<p>01/15.2/193 51-19</p>	<p>Քննարկման արդյունքներով գտնում ենք, որ անհրաժեշտ է հստակեցնել Նախագծի 1-ի և 2-րդ կետերը, քանի որ Նախագծի 1-ին կետով նախատեսվում է քաղաք Երևան, Հալաբյան 16 հասցեում գտնվող 15000 քառ. Մետր մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով փոխանցել Սիմոնյան կրթական հիմնադրամին, մինչդեռ Նախագծի 2-րդ կետով խոսքը նույն հասցեում գտնվող և միևնույն մակերեսով անշարժ գույքի նվիրատվության գործարքի մասին է: Նախագծի հիմնավորման մեջ ևս առկա է հակասություն, հետևաբար առաջարկում ենք հաշվի առնել նաև գույքի նվիրատվության և նվիրաբերության առանձնահատկությունները:</p>		
<p>4.Էկոնոմիկ այի նախարարո ւթյուն 15.11.2019թ. հ. 01/11248- 2019</p>	<p>Առաջարկություններ և առարկություններ չկան</p>		
<p>5.ՀՀ պետական եկամոտնե րի կոմիտեի 20.11.2019թ . հ. 01/3- 1/72847- 2019</p>	<p>Նախագծով առաջարկվում է Սիմոնյան կրթական հիմնադրամին «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ անշարժ գույքի մաս կազմող հողամասի կառուցապատման իրավունքով փոխանցելու գործարքը ՀՀ հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասի կիրառման իմաստով համարել իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ գործարք երեք տարի ժամկետով: Միաժամանակ, առաջարկվում է Սիմոնյան կրթական հիմնադրամին «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ անշարժ գույքի մաս կազմող հողամասի նվիրատվության գործարքը՝ նույն մասի կիրառման նպատակով համարել անհատույց գործարք:</p> <p>Նախագծով առաջարկվող կարգավորումները հիմնավորվում են այն հանգամանքով, որ Սիմոնյան կրթական հիմնադրամն իր և Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի անունից Եվրոպական միության հետ կնքել են դրամաշնորհի պայմանագիր, որով Սիմոնյան կրթական</p>		

	<p>հիմնադրամը հանձն է առել ծրագրի իրականացման նպատակով հատկացնել 15000մ² մակերեսով հողատարածք: Բանակցության արդյունքում բարերարն իրեն պատկանող «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ի միջոցով պատրաստակամություն է հայտնել Սիմոնյան կրթական հիմնադրամին հանձնել անհրաժեշտ հողատարածքը՝ պայմանով, որ «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ն հողատարածքն ի սկզբանե տրամադրում է կառուցապատման իրավունքով՝ 3 տարի ժամկետով և անմիջապես, այս ժամկետի ավարտից հետո՝ առանց հետ կանչելու հնարավորությամբ, նվիրաբերում է հողատարածքը Սիմոնյան կրթական հիմնադրամին և սահմանված կարգով ազատվում է նշված գործարքներից առաջացող հարկային պարտավորություններից:</p> <p>1.Կառուցապատման իրավունքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական և ՀՀ հողային օրենսգրքերով: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 204¹-րդ և ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածներին համապատասխան՝ այլ անձի պատկանող հողամասում անձը կարող է պայմանագրով ձեռք բերել կառուցապատման իրավունք՝ քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաև հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ սահմանված կարգով կառուցել շենքեր և շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել և կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել և օգտագործել այդ գույքը: Կառուցապատող (կառուցապատման իրավունքով հողամասն օգտագործելու իրավունք ունեցող) անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաև կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ:</p>	<p>1Ընդունվել է</p>	<p>1.Նախագծի 1-ին կետը լրամշակվել է և սահմանվել է, որ հողատարածքը տրամադրվում է կառուցապատման իրավունքով՝ օգտագործման նպատակով</p>
--	---	---------------------	--

	<p>Վերոնշյալ կարգավորումներին համապատասխան՝ ենթադրվում է, որ «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասում Սիմոնյան կրթական հիմնադրամը պայմանագրով ձեռք է բերելու կառուցապատման իրավունք, սակայն նախագծով խոսք է գնում Սիմոնյան կրթական հիմնադրամին «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ անշարժ գույքի մաս կազմող հողամասի կառուցապատման իրավունքով փոխանցելու գործարքի մասին, ինչը հստակեցման կարիք ունի:</p> <p>2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածով սահմանվում են քաղաքացիական իրավունքի օբյեկտների տեսակները, որոնց թվին է դասվում նաև գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները: Գույքային իրավունքի ծագման հետ կապված դրույթներ սահմանված են օրենսգրքով: Մասնավորապես՝ օրենսգրքի 10-րդ հոդվածը, ի թիվս իրավունքի ծագման այլ հիմքերի, սահմանում է նաև պայմանագիրը և գործարքը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն: Միաժամանակ, «Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն ոչ ուշ, քան այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:</p>	<p>2Ընդունվել է</p>	<p>2.Նախագծի 1-ին կետը լրամշակվել է և սահմանվել է, որ հողատարածքը տրամադրվում է կառուցապատման իրավունքով՝ օգտագործման նպատակով</p>
--	--	---------------------	--

	<p>Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառուցապատման իրավունքը փոխանցվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված և պետական գրանցում ստացած գործարքի արդյունքում, իսկ ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված հարկման բազայի առանձնահատկությունները կիրառվում և տարածվում են գործարքների նկատմամբ, հետևաբար, եթե նախատեսվում է կառուցապատման իրավունքի փոխանցում, հայտնում ենք, որ նախագծի 1-ին և 3-րդ կետերով նախատեսվող կարգավորումների՝ հողամասի կառուցապատման իրավունքի փոխանցման գործարքի նկատմամբ 3 տարի ժամկետ սահմանելու մասով իրավական հիմքեր առկա չեն, և նշված կետերը ենթակա են հստակեցման:</p> <p>3.ՀՀ հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Կառավարության որոշումների հիման վրա ԱԱՀ վճարողների կողմից ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման անհատույց գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան համարվում է 0 դրամ, իսկ իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ստացման ենթակա հատուցման գումարը՝ առանց ԱԱՀ-ի:</p> <p>Այս առումով հայտնում ենք, որ առաջարկությունը նպատակահարմար համարվելու պարագայում նախագծի 1-ին կետից անհրաժեշտ է հանել «և այդ գործարքի դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ստացման ենթակա հատուցման գումարը՝ առանց ԱԱՀ-ի», իսկ 2-րդ կետից՝ «և այդ գործարքի դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան համարվում է 0 դրամ», քանի որ հարկման բազայի նշված առանձնահատկությունները սահմանված են օրենսգրքով: Այդ առանձնահատկությունների կիրառման համար բավարար կլինի ԱԱՀ վճարողների կողմից</p>	<p>3.ընդունվել է</p>	<p>3.Նախագծի 1-ին և 2-րդ կետերը լրամշակվել են առաջարկությանը համապատասխան, հատուցման գումարը սահմանվել է նշված հողատարածքի հողի հարկի պարտավորության չափով</p>
--	--	----------------------	--

	<p>ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքները Կառավարության որոշմամբ անհատույց կամ իրական արժեքից ցածրարժեքով հատուցմամբ համարվելը: Միաժամանակ, նախագծով նախատեսվող իրական արժեքից ցածր արժեքով հատուցման գործարքի մասով անհրաժեշտ է սահմանել նաև ստացման ենթակա հատուցման գումարի չափը:</p>		
<p>6. Երևանի քաղաքապետարան 22.11.2019թ . հ.01/7-107057Ը</p>	<p>Առաջարկություններ և առարկություններ չկան</p>		
<p>7. Արդարադատության նախարարություն 21.01.2020թ հ./27.1/309 03-2019</p>	<p>1. «Սիմոնյան կրթական հիմնադրամին ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների ավելացված արժեքի հարկով հարկման բազայի որոշման առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, թե սույն կետի իմաստով ով է հանդիսանում նվիրառու և ինչ ժամկետում կնքվող գործարքի մասին է խոսքը:</p> <p>2. Նախագծի 4-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, հստակեցնելով որ խոսքը վերաբերում է Նախագծով նախատեսված արտոնությունը կիրառելուն, այլ ոչ թե հողամասից ցանկացած մաս առանձնացնելու առթիվ կառավարության կողմից տրվող թույլտվությանը, որպիսի լիազորություն կառավարությունը չունի:</p>	<p>1. Ընդունվել է:</p> <p>2. Ընդունվել է:</p>	<p>1. նախագծի 1-ին և 2-րդ կետերը խմբագրվել են՝ լրացվել են գործարքների կատարման ժամկետները:</p> <p>2. նախագծի 4-րդ կետը խմբագրվել է:</p>

<p>8. 28.02.2020 թ. Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի քննարկման արդյունքում տրված հանձնարարական</p>	<p style="text-align: center;">ՏԵՂԵԿԱՆՔ</p> <p>«Սիմոնյան կրթական հիմնադրամին ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների ավելացված արժեքի հարկով հարկման բազայի որոշման առանձնահատկությունների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ</p> <p>Ս.թ. փետրվարի 28-ին կայանալիք՝ մշտապես գործող Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստի օրակարգի 8-րդ կետով ներկայացված՝ «Սիմոնյան կրթական հիմնադրամին ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների ավելացված արժեքի հարկով հարկման բազայի որոշման առանձնահատկությունների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:</p> <p>Նախագծի համաձայն՝ սահմանվում է Սիմոնյան կրթական հիմնադրամին ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման առանձնահատկությունները:</p> <p>Այս առումով, հայտնում ենք, որ նախագծի նախնական տարբերակով նախատեսվում էր սահմանել Սիմոնյան կրթական հիմնադրամին ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների ԱԱՀ-ով հարկման բազան, որի վերաբերյալ հայտնել ենք հետևյալը:</p> <p>ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 9-րդ հոդվածի՝</p> <p>1) 1-ին մասի համաձայն՝ հարկը և վճարը համարվում են սահմանված միայն այն դեպքում, երբ սահմանված են հարկ վճարողների շրջանակը, հարկման օբյեկտը, հարկման բազան,</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագիծը լրամշակվել է</p>
--	---	--------------------	------------------------------

հարկի դրույքաչափը, հարկի հաշվարկման կարգը, հարկի վճարման կարգը և ժամկետները,

2) 2-րդ մասի համաձայն՝ հարկի և բնօգտագործման վճարի սահմանման համար անհրաժեշտ տարրերը սահմանվում են Օրենսգրքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնել ենք, որ ՀՀ կառավարության որոշմամբ չի կարող սահմանվել հարկման բազա և առաջարկել ենք նախագծում և դրա վերնագրում կատարել համապատասխան փոփոխություններ:

Նախագծի լրամշակված տարբերակով սահմանվում է Սիմոնյան կրթական հիմնադրամին ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման առանձնահատկությունները:

Վերոգրյալի կապակցությամբ, կրկին հայտնում ենք, որ ՀՀ կառավարության որոշմամբ չի կարող սահմանվել հարկման բազա (այդ թվում՝ նաև հարկման բազայի որոշման առանձնահատկություններ), իսկ նախագծով ընդամենը պետք է սահմանել, որ ՀՀ կառավարությունը որոշում է, որ խնդրո առարկա՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքները իրականացվում են իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ կամ անհատույց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք, մասնավորապես, քննարկել նախագծի վերնագիրը հետևյալ բովանդակությամբ շարադրելու հարցը. «Էփիջի Լեբս Էյէմ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասն իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ

	<p>օգտագործման տրամադրելու և այն անհատույց օտարելու մասին»:</p> <p>Այս առումով, հայտնում ենք նաև, որ նախագծի 1-ին կետով անհրաժեշտ է ընդամենը սահմանել, որ Սիմոնյան կրթական հիմնադրամին «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասից 15000մ2 մակերեսով հողամասն օգտագործման համար տրամադրվում է ամսական 18300 ՀՀ դրամով, իսկ 2-րդ կետով՝ սահմանել, որ Սիմոնյան կրթական հիմնադրամին «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասից 15000մ2 մակերեսով հողամասը տրամադրվում է նվիրատվությամբ: Միաժամանակ, վերոգրյալով պայմանավորված անհրաժեշտ է նաև նախագծից հանել նախագծի 3-րդ կետը, քանի որ տվյալ պարագայում արտոնության կիրառման ժամանակահատված</p> <p>սահմանելու անհրաժեշտությունը կբացակայի:</p>		
<p>9.Ֆինանսների նախարարություն 10.03.2020թ. հ. 01/2- 3/3635-2020</p>	<p>1. Նախագծի 1-ին կետով առաջարկվում է սահմանել, որ Սիմոնյան կրթական հիմնադրամին կառուցապատման իրավունքով տրամադրվում է հողամաս, իսկ 2-րդ կետով սահմանվում է, որ նույն հողամասը օտարվում է Սիմոնյան կրթական հիմնադրամին՝ տրամադրվում է նվիրատվությամբ: Այսինքն, մի կողմից սահմանվում է, որ հողամասը տրամադրվում է օգտագործման նպատակով, մյուս կողմից սահմանվում է, որ հողամասն օտարվում է:</p> <p>Այս առումով, հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք նախագծով հստակեցնել, որ</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>2.Ընդունվել է</p>	<p>1.խմբագրվել է 2-րդ կետը</p> <p>2.խմբագրվել է նախագծի</p>

	<p>հողամասը Սիմոնյան կրթական հիմնադրամին նվիրատվությամբ տրամադրվում է կառուցապատումից հետո:</p> <p>2. Առաջարկում ենք խմբագրել նախագծի ընդունման հիմնավորումը՝ հաշվի առնելով այն, որ ներկայացված հիմնավորումը նախագծի նախնական տարբերակի հիմնավորումն է:</p>		<p>ընդունման հիմնավորումը</p>
<p>1. ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե 03.08.2020թ. հ.ՍԹ/4458-2020</p>	<p>Առաջարկում է հստակեցնել նախագծի 1-ին և 2-րդ կետերը, քանի որ նախագծի 1-ին կետով նախատեսվում է քաղաք Երևան, Հալաբյան 16 հասցեում գտնվող 15000 քառ. մետր մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով փոխանցել Սիմոնյան կրթական հիմնադրամին, մինչդեռ 2-րդ կետը նույն հասցեում գտնվող և նույն մակերեսով հողամասի նվիրատվության գործարքի մասին է:</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>հողամասը Սիմոնյան կրթական հիմնադրամին նվիրաբերությամբ տրամադրվում է նախագծի 1-ին կետում սահմանված գործարքի կնքումից հետո</p>
<p>2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 04.08.2020թ. հ. 01/3-1/49697-2020</p>	<p>Որոշման լրամշակված նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չկան:</p> <p>Միաժամանակ, որոշման նախագծի 2-րդ կետով նախատեսվող՝ ընկերության կողմից հողամասի նվիրատվության գործարքի մասով ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման հետ կապված հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան՝ հողամասի օտարման (այդ թվում՝ նվիրատվության) դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է օրենսգրքի 61-րդ հոդվածով և նույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի չափով: Ընդ որում, վերոնշյալ դրույթը չի կիրառվում այն դեպքում, երբ</p>	<p>Ընդունվել է ի գիտություն</p>	

	<p>գույքային միավորների օտարման գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով):</p>		
<p>3.Ֆինանսների նախարարություն 05.08.2020 թ. հ. 01/2-3/11482-2020</p>	<p>Նախագծով, մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասից 15000մ² մակերեսով հողամասն իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ օգտագործման է տրամադրվելու և այնուհետև անհատույց օտարվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամին:</p> <p>Վերոգրյալի կապակցությամբ, հայտնում ենք հետևյալը:</p> <p>1. ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրքի)՝</p> <p>1) 108-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները), աշխատանքները և ծառայությունները,</p> <p>2) 109-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1-ին կետի համաձայն՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի (այսուհետ՝ շենք) օտարումից եկամուտը հաշվարկվում է դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայից (այսուհետ՝ նույն մասում՝ կադաստրային արժեք) ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման (առանց ԱԱՀ-ի) դեպքում կադաստրային արժեքի և փաստացի հատուցման գումարի (առանց ԱԱՀ-ի) դրական տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, գործարքի կատարման օրը ներառվում է նոր սեփականատիրոջ եկամուտների մեջ,</p>	<p>1.Ընդունվել է ի գիտություն</p>	

բացառությամբ այն դեպքերի, երբ օտարողը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ, որի դեպքում նոր սեփականատիրոջ մոտ ներված պարտավորություն չի առաջանում: Ընդ որում, ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից շենքն այլ անձի (ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ) կադաստրային արժեքից ցածր գնով (այդ թվում՝ ԱԱՀ-ը) օտարելու դեպքում՝

ա. օտարող ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները հաշվարկվում են շենքի կադաստրային արժեքի չափով, որից նվազեցվում է օտարման օրն ընդգրկող ամսվա 1-ի դրությամբ տվյալ շենքի հաշվեկշռային արժեքը, ինչպես նաև ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համար այդ գործարքից օրենքով սահմանված կարգով լրացուցիչ հաշվարկվող այլ հարկերը,

բ. գնորդ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համար շենքի սկզբնական արժեքը որոշվում է կադաստրային արժեքով, իսկ շենքի կադաստրային արժեքի և փաստացի ձեռքբերման գնի (առանց ԱԱՀ-ի) տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, ներառվում է համախառն եկամտի մեջ,

	<p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծով առաջարկվող՝ հողամասը նվիրատվությամբ տրամադրելու գործարքի իրականացման դեպքում «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ի մոտ շահութահարկով հարկման նպատակով հիմք է ընդունվելու հողամասի կադաստրային արժեքը, ինչի հետևանքով «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ի մոտ կարող են առաջանալ շահութահարկի գծով հարկային պարտավորություններ:</p> <p>Միաժամանակ, հայտնում ենք, որ նույն գործարքից Սիմոնյան կրթական հիմնադրամի մոտ՝ որպես հողամասը ստացողի, շահութահարկի գծով հարկային պարտավորություններ չեն առաջանա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվները շահութահարկով հարկման նպատակով եկամուտ չեն համարվում:</p> <p>2. Առաջարկում ենք նախագծի 4-րդ կետի «սույն որոշմամբ ավելացված արժեքի հարկի ազատման գումարը չի հաշվարկվում» բառերը փոխարինել «սույն որոշման ընդունման արդյունքում ավելացված արժեքի հարկի գծով առաջացող պարտավորությունների կրճատված մասը չի համարվում» բառերով՝ հաշվի առնելով այն, որ նախագծով խնդրո առարկա գործարքները ոչ թե ազատվում են ավելացված արժեքի հարկից, այլ դրանց մասով սահմանվում են ավելի փոքր հարկման բազաներ:</p>	2.ընդունվել է	2.Նախագծի 4-րդ կետը խմբագրվել է
4.Երևանի քաղաքապետարան 05.08.2020 2. հ. 01/7-75513-հ	Առաջարկություններ և առարկություններ չկան		
5.Էկոնոմիկայի նախարարություն 04.08.2020 Թ. հ.01/11018-2020	Առաջարկություններ և առարկություններ չկան		

<p>6.Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 10.08.2020 թ. հ. ՄՊ/15.3/2270 0-2020</p>	<p>Առաջարկություններ և առարկություններ չկան</p>		
<p>7.Սիմոնյան կրթական հիմնադրամ 2020-07-08</p>	<p>Սույնով Սիմոնյան կրթական հիմնադրամը «Էփիջի Լէքս Էյէմ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասն իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ օգտագործման տրամադրելու և այն անհատույց օտարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ուսումնասիրության արդյունքներով հայտնում է հետևյալ նկատառումները՝</p> <p>1) Նախագծի 2-րդ կետի վերաբերյալ: Սիմոնյան կրթական հիմնադրամը «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական միության միջև 2018թ. նոյեմբերի 29-ին և դեկտեմբերի 14- ին ստորագրված «Հայաստանում ԵՄ-ն նորարարության համար» նախաձեռնություն. Կրթության բարելավում՝ հատկապես գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտներում» (Հատուկ պայմաններ) ֆինանսավորման համաձայնագրի կողմ չի հանդիսանում, հետևաբար այդ համաձայնագրով սահմանված որևէ ժամկետ Սիմոնյան կրթական հիմնադրամին չի կարող վերաբերել: Ավելին՝ հիմնադրամին հայտնի չէ, թե ինչ ժամկետներ են սահմանված այդ համաձայնագրով: Ուստի կարծում ենք, որ այդ համաձայնագրի վերաբերյալ նշումը պետք է հանել որոշման նախագծից, փոխարենը կարող է նշվել «ԵՄԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիր ծրագիր» պայմանագրի ժամկետին հղում, այն պայմանագրի, որի կողմ է հանդիսանում հիմնադրամը:</p> <p>2) Նախագծի 4-րդ կետի վերաբերյալ: Նախագծի այս կետում նույնպես հղում է տրված «Հայաստանում ԵՄ-ն նորարարության համար» նախաձեռնություն. Կրթության բարելավում՝ հատկապես գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտներում» (Հատուկ պայմաններ) ֆինանսավորման համաձայնագրին: Նախագծում այս համաձայնագրին հղում տալու վերաբերյալ մեր նկատառումներ կարող եք տեսնել սույն գրության 1-ին կետում:</p> <p>Կատարված երկու փոփոխություններն արտացոլված են սույն գրությանը կից որոշման նախագծում:</p>	<p>1.2ի ընդունվել</p> <p>2.2ի ընդունվել</p>	<p>1.ՀՀ կառավարությունը նշված պայմագրի կողմ չի հանդիսանում</p> <p>2.ՀՀ կառավարությունը նշված պայմագրի կողմ չի հանդիսանում</p>

	<p>Ի դեպ Ձեր գրության մեջ նշված 3,125,000 Եվրոի գումարային ֆինանսավորումը պետք շտկել՝ դարձնելով 2,631,513.70 Եվրո, որը համապատասխանում է Հիմնադրամի կողմից ստանձնած ներդրումային պարտավորությանը:</p>		
<p>8.Արդարադատության նախարարություն 26.08.2020 թ. հ. 01/27.0.01/19160-2020</p>	<p style="text-align: center;">ԿԱՐԾԻՔ</p> <p style="text-align: center;">«Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասն իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ օգտագործման տրամադրելու և այն անհատույց օտարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ</p> <p>1. «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասն իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ օգտագործման տրամադրելու և այն անհատույց օտարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին կետով նախատեսվում է «Էփիջի Լէբս Էյէմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության, քաղաք Երևան, Հալաբյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքի մաս կազմող հողամասից 15000մ² մակերեսով հողամասը (այսուհետ՝ հողամաս) տրամադրել Սիմոնյան կրթական հիմնադրամին (այսուհետ՝ Հիմնադրամ) օգտագործման համար ամսական 18.300 ՀՀ դրամով՝ բացառապես ԵՄ Թումո ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցապատման իրավունքով և վերջինիս գործունեության ապահովման նպատակով:</p> <p>Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի համաձայն՝ հողամասի կառուցապատման և գույքի օգտագործման իրավունքները սեփականատեր չհամարվող անձանց՝ ինքնուրույն գույքային իրավունքներ են: Ուստի, հստակեցման կարիք ունի՝ արդյոք նշված հողամասը Հիմնադրամին տրամադրվում է և՛ օգտագործման, և՛ կառուցապատման իրավունքներով, ինչպես նաև Նախագծով նախատեսվող 18.300 ՀՀ դրամ ամսական վճարը օգտագործման, թե՛ կառուցապատման իրավունքի դիմաց վճարվող գումարն է: Վերոգրյալի համատեքստում «օգտագործման համար...կառուցապատման իրավունքով» ձևակերպումն առաջակում ենք խմբագրել:</p> <p>Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, այն հանգամանքը, որ ըստ Նախագծի հիմնավորման՝ համապատասխան համալիրի կառուցումից հետո հողամասը նախատեսվում է անհատույց օտարել Հիմնադրամին, առաջարկում ենք նշված կետում</p>	<p>1.Ընդունվել է</p>	<p>1.Նախագծի 1-ին կետը խմբագրվել է:</p>

	<p>հստակեցնել հողմասի օգտագործման իրավունքի ժամկետը, այն է՝ մինչև համալիրի կառուցման ավարտը:</p> <p>2. Նախագծի 2-րդ կետի համաձայն՝ հողամասը հիմնադրամին նվիրատվությամբ տրամադրվում է որոշման 1-ին կետում նշված գործարքից հետո, բայց ոչ ուշ քան համապատասխան ֆինանսավորման համաձայնագրի ժամկետի ավարտը: Նույն կետով նախատեսվում է, որ հողամասը հիմնադրամին նվիրատվությամբ տրամադրվում է բացառապես Թումո համալիրի կառուցապատման և վերջինիս գործունեության ապահովման նպատակով: Հաշվի առնելով Նախագծին կից ներկայացված հիմնավորումը՝ առաջարկում ենք նշված կետում նախատեսել, որ հողամասը Հիմնադրամին նվիրատվությամբ հանձնվում է ոչ թե 1-ին կետում նշված գործարքից հետո, այլ Թումո համալիրի կառուցապատման ավարտից հետո:</p> <p>3. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հողամասը նախատեսվում է հիմնադրամին տրամադրել բացառապես ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցման և վերջինիս գործունեության ապահովման նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի դրույթները՝ Նախագծի 2-րդ կետով անհրաժեշտ է նախատեսել, որ հողամասը Հիմնադրամին տրամադրվում է նվիրաբերությամբ, այլ ոչ թե նվիրատվությամբ:</p>	<p>2.2ի ընդունվել:</p> <p>3.Ը նդու նվել է:</p>	<p>2.«Էփիջի Լէբսէյէմ» ՍՊԸ-ն նշված տարածքի նվիրաբերությունը նախատեսում է մինչև համալիրի կառուցապատման ավարտը</p> <p>3. 2-րդ կետում կատարվել է փոփոխություն:</p>
<p>9.Սիմոնյան կրթական հիմնադրամ 28.08.2020</p>	<p>Առաջարկություններ և առարկություններ չկան</p>		